

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

1983 թվականի սեպտեմբերի 22-ից 30-ը հիշարժան և պատմական օրեր հանդիսացան մեր ազգային ու եկեղեցական պատմության մեջ: Երևանյան աշնանային այդ գեղեցիկ օրերը միշտ թարմ և տպավորիչ կմնան բազմահազար հայ ժողովրդի զավակների սրտերում:

Սրբազոյս մեռոնի օրհնության և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի ծննդյան 75-ամյակին, քահանայագործության 40-ամյակին և հայրապետական օծման ու գահակալության 28-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունները մի նոր էջ բացեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության մեջ:

Դարերի խորքից եկած մեռոնօրհնեքի արարողությունները մեծ շուքով և հանդիսավորությամբ է նշել հայ ժողովուրդը, այդ արարողությունները միշտ հարազատ են եղել հայի հոգուն, որովհետև յուրաքանչյուր մեռոնօրհնության ժամանակ է՛լ ավելի է նորոգվել Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հոգևոր միասնության ուխտը, իսկ Վեհափառ Հայրապետի ծննդյան հանդիսությունը մեծ տոն էր Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի համար, որովհետև Վեհափառ Հայրապետը, մեր Եկեղեցու պատմության վերջին շրջանում, իրոք դարձավ ջահակիրը Հայ Եկեղեցու վերազարթոնքի:

Ահա այս հանդիսավոր առիթներով մայր հայրենիքը իր դռները լայնորեն բաց էր արել բազմահազար ուխտավորների առաջ: Աշխարհի տարբեր երկրներից Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին այցելում Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, հոգևոր ներկայացուցիչներ, թեմական և եկեղեցական վարչությունց անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, հասարակական գործիչներ, մասավորականներ և այլ հյուրեր: Նրանք գալիս էին իրենց ուրախությունը կիսելու մայր հայրենիքի եղբայրների և քույրերի հետ, գալիս էին, որպեսզի հաղորդակցվեն մեռոնաբույր Ս. Էջմիածնով մեր նախնիների սուրբ հոգիների հետ, գալիս էին տեսնելու վերածնված ու շենացած մայր Հայաստանը:

Մայր Աթոռ էին գալիս նաև քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ բաժանելու Հայ Եկեղեցու և ժողովրդի ուրախությունը: Երևանի «Ջվարթնոց» օդանավակայանում պատշաճ հարգանքով հյուրերին դիմավորում են Մայր Աթոռի հանդիսությունները նախապատրաստող հանձնաժողովի կողմից նշանակված անձինք:

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Սեպտեմբերի 23-ին, ուրբաթ օրը, Մայր Աթոռ է ժամանում Թուրքիայի հայոց Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը՝ ընկերակցությամբ Տ. Պետրոս քհն. Պետրոսյանի և բարեջնորհ Կարպիս սրկ. Սեմերճյանի:

Մայր տաճարի շքամուտքի առաջ, լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի գլխավորությամբ, եկեղեցական թափորը «Հրաշափառ» շարականի-երգով Ամենապատիվ սրբազան Հորն առաջնորդում է Մայր տաճար, ուր Իջման Ս. Սեղանի առաջ Տ. Հուսիկ սրբազանը ողջունում է մեծապատիվ հյուրին հետևյալ խոսքերով.

«Այս երջանիկ և ուրախ առիթով, հանուն Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռիս միաբանության, հոգևոր դասի և հավատացյալների, սրտագին Ձեզ բարի գալուստ ենք մաղթում: Գալիք օրերը խանդավառ և ուրախ օրեր են լինելու մեր ժողովրդի համար: Ուրախ և երջանիկ է նախ մեր մայր Եկեղեցին, հայ հավատացյալ ժողովուրդը և բազմահարյուր ուխտավոր հայեր, որոնք գոնվում են Ս. Էջմիածնում և մայր հայրենիքում:

Դուք, սրբազան Հայր, գալիս եք հեռավոր Կ. Պոլսից, որտեղ հազարավոր հայեր կարոտով ձգտում էին ներկա լինել առաջիկա կիրակի օրը տեղի ունենալիք սուրբ մեռոնօրհնության արարողությանը»:

Իր խոսքի վերջում Հուսիկ սրբազանը Ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքին փոխանցում է Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության և հայ ժողովրդի ողջույններն ու բարի մաղթանքները:

Այնուհետև պատասխան շնորհակալական խոսք է ասում Ամեն. Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը. «Մենք մեր գոհունակությունը պիտի հայտնենք Հուսիկ սրբազանին և Մայր Աթոռի միաբանության բարիգալստյան այս խոսքերուն և ջերմ ընդունելության համար այս հինավուրց Ս. Եկեղեցվո կամարներուն տակ: Երջանկությամբ եմ լեցված, որովհետև իմ ուխտս իր լրումը գտած է: Այսօր, յոթներորդ անգամ ըլլալով, ես կանգնած եմ այս սուրբ հողին վրա, ուր Ինքն Աստուծո Միածին Որդին անձամբ իջավ և այստեղ ցույց տվավ այն վայրը, որ պիտի դառնար համայն քրիստոնեական Եկեղեցվո առաջին աղոթավայրը»:

Իր խոսքի մեջ սրբազան պատրիարքն ասում է, թե ինչքան մեծ և նշանակալից է եղել Ս. Էջմիածինը հայ ժողովրդի համար, և ներկայումս ինչպիսի նվիրական զգացմունքներով է հայ ուխտավորը ոտք դնում հայերի հոգևոր կենտրոն Ս. Էջմիածին՝ «հագեցնելու իր հոգևոր ծարավը»:

Իր խոսքի վերջում Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոսը իր բարի մաղթանքներն է հղում Հայոց Հայրապետին՝ ցանկանալով նրան հաջողություններ իր եկեղեցաշեն և ալգանվեր գործունեության մեջ:

Իջման Ս. Սեղանի առաջ արտասանված սույն խոսքերից և աղոթքներից հետո, կանգերի ողողանջների ներքո, պատրիարք սրբազան հայրը հանդիսավոր թափորով առաջնորդվում է Վեհարան, որտեղ Վեհափառ Հայրապետը, քույր

Եկեղեցիների պատգամավորների հետ միասին, ընդունում է նրան եղբայրական ջերմ սիրով ու ողջագուրումով:

Սեպտեմբերի 15-ից մինչև 23-ը սրբալույս մեռոնի օրհնության և հոբելյանական հանդիսություններին մասնակցելու համար Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելում ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ և Հունաստանի հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը, Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և առաջնորդ Տ. Եղիշե եպս. Կիպիրյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը, Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան եպս. Պալիոլյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

Հրավիրյալների թվում են՝ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նազգաշյանը, Երուսաղեմի հայոց պատրիարքության ներկայացուցիչներ Տ. Կյուրեղ եպս. Գաբիկյանը, Տ. Սեսն վրդ. Ղարիբյանը, Տ. Վահան վրդ. Թոփալյանը և Տ. Վաղարշակ վրդ. Խաչատուրյանը, ԱՄՆ-ի արևելյան թեմի հոգևոր հովիվ Տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը, Բրազիլիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Տաթև ծ. վրդ. Ղաբրիելյանը, Շվեյցարիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Վիգեն վրդ. Այվազյանը, Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Սարգիս քհն. Սարգիսյանը և Հալկաթայի հայոց հոգևոր հովիվ Տ. Սարգիս քհն. Թաշչյանը:

Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով հանդիսություններին մասնակցելու համար Մայր Աթոռ էր ժամանել նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության պատվիրակությունը, որի կազմում էին Տ. Սուրեն արքեպ. Գաբարոյանը, Տ. Զարեհ եպս. Ակնավուրյանը և Տ. Կոմիտաս վրդ. Օհանյանը:

Ներքին թեմերից հանդիսություններին մասնակցում էին, ի դուխ պատգամավորների, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին վրդ. Ներսիսյանը, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա վրդ. Արաբաջյանը, ինչպես նաև Մայր Աթոռից Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողոսյանը:

Հանդիսություններին մասնակցող քույր Եկեղեցիների պատվիրակություններին գլխավորում էին. Ռուսաց Եկեղեցուց՝ Նովգորոդի և Լենինգրադի միտրոպոլիտ Տ. Անտոնին, Վրաց Եկեղեցուց՝ Տ. Քրիստափոր Մարգվեթի եպիսկոպոսը, Ռումեն Օրթոդոքս Եկեղեցուց՝ Մոլդովայի և Սուչավայի միտրոպոլիտ Տ. Թեոկթիստը: Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցին ներկայացնում էր Տ. Կիրիլ վարդապետը, իսկ Անգլիկան Եկեղեցին՝ Հենրի Հիլ եպիսկոպոսը, Քենթբերիի ավագերեց Վիկտոր դը Վաալ կանոնիկոսը և պրն. Պատրիկ Ժիլբերտը: Ավստրիայից որպես Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պատգամավոր ներկա էր աստվածաբանության պրոֆեսոր հայր Էռնեստ Քրիստոֆ Սուտները:

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ Բ

ԿԻՐԱԿԱՄՏԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 24-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, Հայ Եկեղեցու թեմերի առաջնորդները, Մայր Աթոռի միաբանները և քույր Եկեղեցիների պատգամավորները, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, եկեղեցական թափորով առաջնորդվում են Մայր տաճար՝ ներկա լինելու կիրակամտի հանդիսավոր ժամերգությանը:

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 25-ին, կիրակի: Այսօր Ամենայն Հայոց Հայրապետը մեծաշուք հանդիսավորությամբ Իր գահակալության 28-րդ տարում հինգերորդ անգամ կատարում է սրբալույս մեռոնի օրհնությունը, որը մի անգամ ևս հաստատում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանությունը և մեր սրգային ավանդական այս սուրբ արարողության վառ հիշատակի անմահությունը:

Աշնանային գեղեցիկ և արևոտ օրերից մեկն է Հայաստանում: Բերքառատ Արարատյան դաշտավայրը և հույությունը խորհրդանշող Արարատ սուրբգրական լեռը ողջունում են հարավատ ժողովրդին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Տասնյակ հազարավոր հոգի՝ Սփյուռքից, Երևանից, Հայաստանի տարբեր շրջաններից և հարևան եղբայրական հանրապետություններից եկել են մեծ ոգևորությամբ մասնակցելու համազգային այս գեղեցիկ արարողությանը:

Մինչև մեռոնօրհնեքի արարողությունը, առավոտյան ժամը 10-ին, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը:

Ս. պատարագի արարողությունից հետո, Վեհարանում կգեստավորվում է Վեհափառ Հայրապետը: Ըստ կանոնի մեռոնօրհնեքի արարողության, իրենց հերթին կգեստավորվում են Հայ Եկեղեցու 12 արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, որոնք ավետարանական ընթերցումներով մասնակից են լինելու մեռոնօրհնության կարգի կատարմանը:

Ժամը 12-ին բացվում են Վեհարանի դռները, և եկեղեցական ճոխ թափորը շարժվում է դեպի Մայր տաճար: Մայր տաճարի դիմաց այս առթիվ պատրաստվել է մի գեղեցիկ բեմ, որի վրա պետք է կատարվի մեռոնօրհնության արարողությունը:

Մի պահ լռություն է տիրում Մայր տաճարի շրջափակում, միայն ուրախ և վշարթ դողանջում են Մայրավանքի զանգերը: Վեհարանի դարպասներից սկսած՝ ժողովրդի հոծ բազմությունը բաժանվում է երկու մասի՝ ճանապարհ տալով թափորին: Եկեղեցական թափորը սկիզբ է առնում Վեհարանի շքամուտքից և ձգվում մինչև բեմահարթակ: Աներևակայելի խանդավառություն է տիրում ողջ շրջափակում, բոլորը ուրախ հոգով և երտով դիմավորում են մեծաշուք եկեղեցական թափորը՝ խաչակնքելով, աղոթք մրմնջալով և գոհություն հայտնելով առ Աստված այս հոգեզմայլ սուրբ պահի համար:

Թափորի առջևից քայլում են կարմրալգեստ երկու շաթիրները՝ ձեռքներին բռնած արծաթագլուխ գավազաններ: Նրանց հետևում են ջահակիրները, որից հետո գալիս են հոգևոր ճեմարանի ուսանողները, այնուհետև՝ շուրջառալգեստ քահանաս հայրերն ու վարդապետները: Թափորի կենտրոնում երկու վարդապետներ տանում են խունկվառն ու գավազանը: Շքեղազգեստ առաջանում է 12 արքեպիսկոպոսներից և եպիսկոպոսներից կազմված շքախումբը. նրանք ձեռք-

ներին բռնած տանում են օրվա խորհուրդը նշող սրբություններ՝ Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը տանում է աստվածամուխ Ս. Գեղարդը, Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը՝ Ս. Կենաց փայտը, Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը՝ Լուսավորչի Ս. Աջը, Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը՝ անուշաբույր ծաղիկների հյութով անոթը, Տ. Սուրեն արքեպ. Գաբարոյանը՝ Կիլիկյան մեռոնը, Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը՝ բալասանով անոթը, Տ. Զավեն արքեպ. Չինչինյանը՝ հին մեռոնը, Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանը՝ Ս. Արիստակես հայրապետի Աջը, իսկ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Տ. Գյուտ եպս. Նազգաջյանը, Տ. Ավազ եպս. Ասատուրյանը և Տ. Եղիշե եպս. Կիլիրյանը տանում են արծաթապատ կալմերով Սուրբ Ավետարանները:

Սարկավագներից մեկը ձեռքերի վրա բարձրացրած տանում է Ս. մեռոնի կաթսայի՝ ոսկեթել երիկներով ձյունասպիտակ շղարշը: Սարկավագին հետևում են մեռոնի երկու կնքահայրերը՝ հարգարժան Սուրեն և Գուրգեն Գործունյանները (Ֆրանսիա) և Գառնիկ Յագուպյանը (Սիրիա)՝ գեղեցիկ ոսկեթել շապիկներ հագած:

Թափորի վերջում գալիս է Վեհափառ Հայրապետը՝ զգեստավորված կաթողիկոսական հանդերձանքով, ձեռքին հայրապետական գավազանն ու խաչը՝ օրհնություն բաշխելով ճանապարհի երկու կողմերում կանգնած հավատացյալ ժողովրդին: Վեհափառ Հայրապետի աջ և ահյակ կողմերով քայլում են Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը և Տ. Աղան եպս. Պալիոզյանը որպես փեջակիրներ:

Հանդիսավոր թափորը դանդաղաքայլ մոտենում է բեմահարթակին, որի վրա դրված է մեռոնով լի արծաթյա կաթսան՝ պատված նուրբ ու ոսկեթել սպիտակ շղարշով:

Հայրապետական թափորին մոտ են կպնում նաև քույր Եկեղեցիների բարձրաստիճան պատգամավորները, որոնք տեղ են գրավում Հին Վեհարանի առջևում այս առթիվ պատրաստված հատուկ ամբիոնի վրա: Ամբիոնի վրա են նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Բեմահարթակի աջակողմյան մասում կանգնած են Ս. Գայանե վանքի երգչախմբի անդամները, որոնք Մայրավանքի վարդապետների և աբեղաների հետ միասին, դպրաց դասի ղեկավար Հայկ Ֆրունջյանի գլխավորությամբ, կատարում են մեռոնօրհնության արարողության շարական-երգերը:

Սկսվում է սուրբ մեռոնի օրհնության հայրապետական մեծահանդես արարողությունը: Եպիսկոպոսները Ս. Գրքից ընթերցում են համապատասխան հատվածներ Սուրբ Յուղի հոգևոր պատրաստության և նրա գործածության մասին: Այնուհետև Վեհափառ Հայրապետը ընթերցում է մեռոնօրհնեքի աղոթքները. «Արդ, կօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ եղիցի իւղս այս՝ իւղ ցընծութեան, զգեստ լուսաւոր, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգւոց և մարմնոց, շնորհք հոգևորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, վէն հաւատոյ, նահատակ յաղթող ընդդէմ ամենայն գործոց բանսարկուին. ոգւոց փրկութիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն յաւիտենական, վի որ ոք օծցի ի սմանէ՝ վերստին ծննդեան իւղովս, երկիւղած լիցի յԱստուծոյ և աներկիւղ ի հակառակորդէն»: Երգեցիկ խումբը մեղմորեն երգում է «Որ յառաջագոյն յօրէնսս» մեռոնօրհնության շարականը և «Մեղեդի մեռոնի»՝ «Հայր ամենակալ», ասյա Շնորհալու գրած «Նոր օրհնութիւն»-ը:

Այս հոգեմայլ երգեցողություններից հետո Վեհափառ Հայրապետը ըն-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՋՈՎ
ՕՐՀՆՈՒՄ Է ՆՈՐ ՄԵՌՈՆԸ

թերցում է մեռնօրհնության մյուս աղոթքները: Ապա, ըստ մեռնօրհնության կարգի, Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը հրավիրում է կնքահայրերին բաց անելու մեռոնի կաթսայի կափարիչը: Պրն. պրն. Սուրեն Գործունյանը և Գառնիկ Յագուայյանը, կաթսայի երկու կողմերում կանգնած, դանդաղորեն բարձրացնում են կափարիչը, իսկ այդ ընթացքում լսվում է «Բացեր, Տէր, այսօր լգանձդ երկնային» շարականը:

Վեհափառ Հայրապետը մոտենում է կաթսային և հանդիսավորապես նրա մեջ լցնում «զնիւթ ծաղկանցն և ապա զպալասանն և զկնի զիին Մեռոնն»՝ երգելով «Առաքելոյ աղաւնոյ» շարականը: Եվ հենց նույն պահին զվարթ հընչում են Մայր տաճարի զանգակատան զանգերը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Ս. Կենաց փայտով, Ս. Գեղարդով և Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով տյառնագրում և խառնում է նոր մեռոնը՝ երգելով. «Օրհնեսցի և սրբեսցի մեռոնս այս նշանաւ...»: Մյուս սուրբ մասունքներով նոր մեռոնը տյառնագրվելուց հետո, կաթսան ծածկվում է կափարիչով, և Վեհափառ Հայրապետը կարդում է վերջին աղոթքը. «Արդ, այժմ և մեք պատրաստելով զսա որպէս կաթն՝ մատուցանեմք, զի ամենեքեան որ ի սմանէ առնուցուն՝ արժանի լիցին ընդունել զհաստատուն կերպարանս, զճշմարիտն, զերկնայինն՝ ի շնորհաց Միածնի քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...»:

«Քրիստոս Աստուած մեր՝ պարգևիչ աստուածային օծութեան, սրբեա՛ զմեզ առ ի քէն սրբութեամբն և արա՛ զմեզ հաղորդս պարգեւաց Հոգւոյդ քո Սրբոյ, որպէս զի կատարեսցի կարգս այս Սրբոյ Մեռոնիս, Տէր մեր և Աստուած մեր յաւիտեան...»: «Եվ այժմ ծագեա՛ ի սիրտս մեր զպարգևս բարութեան Հոգւոյդ Սրբոյ, և հաղորդակից երևեցո՛ զմեզ պարգեւաց քոց սրբոց, վասնզի Դու իսկ ես Մեռոն անբիծ, և մաքուր, և անաղտ, որ հանապազ բուրես յանձինս սրբոց քոց...»:

Աղոթքից հետո ընթերցվում է Ս. Մարկոսի Ավետարանից մի հատված՝ «Եւ շրջէր Տէրն մեր Յիսուս Քրիստոս»:

Ապա լսվում է սարկավագի բարձր և հնչեղ ձայնը. «Սուրբ խաչիս և Սուրբ Մեռոնաս աղաչեսցուք զՏէր»: Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով էլ ավարտվում է յոթ տարին մեկ անգամ կատարվող սրբալույս մեռոնի օրհնության այս հիասքանչ արարողությունը: Վերջում ներկաները, համակ ուշադրություն դարձած, լսում են Ամենայն Հայոց Հայրապետի ոգեշունչ քարոզը՝ նվիրված սուրբ մեռոնի հոգևոր նշանակությանը (Վեհափառ Հայրապետի քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 11):

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Սրբալույս մեռոնի օրհնության հանդիսավոր արարողությունից հետո, Վեհարանի սեղանատունը, ի պատիվ Մայր Աթոռ ժամանած բարձրաստիճան հոգևոր հյուրերի, տրվում է ճաշկերույթ:

Սույն ճաշկերույթին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, ներկա են՝ ամենապատիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը, Հայ Եկեղեցու ներքին և արտասահմանյան թեմերի առաջնորդները, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատվիրակությունը, ինչպես նաև Ռուսաց, Վրաց, Ռումին, Անգլիկան և Բուլղար քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Ճաշկերույթի ընթացքում Ամենայն Հայոց կաթողիկոսը դիմում է ներկաներին հետևյալ խոսքով. «Այս գեղեցիկ և նվիրական արարողությունից հետո, երբ սրբալույս մեռոնը օրհնեցինք միասին աղոթելով, ես նախ ցանկանում

եմ իմ գոհությունը հայտնել Աստծուն, որ ինձ շնորհեց բավարար տարիներ հինգերորդ անգամ օրհնելու սրբալույս մեռոնը: Կարծում եմ, որ քիչ հայրապետներ մեր փոթորկալից պատմության ընթացքում շնորհն են ունեցել այդքան անգամներ կատարելու այդ սուրբ արարողությունը: Երջանիկ եմ, որ շրջապատված եմ մեր հոգևոր առաջնորդներով, բազմահազար հայ ուխտավորներով և հայ ժողովրդով: Ես առաջարկում եմ բաժակ բարձրացնել և խմել Հայ Եկեղեցու և համայն հայ ժողովրդի կենացը»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջարկում է երկրորդ բաժակը բարձրացնել և խմել Կ. Պոլսի հայոց Ամենապատիվ Տ. Շնորք արքեպ. Գալուստյանի կենացը: Ներկաները ջերմորեն ընդունում են Վեհափառ Հայրապետի առաջարկած կենացը և իրենց հերթին երկար տարիների կյանք մաղթում սրբազան հորը իր առաքելական գործունեության մեջ:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը կենացներ է առաջարկում նաև Հայոց մյուս նվիրապետական Աթոռների և քույր Եկեղեցիների առաջնորդների կյանքի արևշատության և նրանց բարի գործունեության հաջողության համար:

Շնորհակալական խոսքերով հանդես են գալիս պատվիրակությունների ղեկավարները և իրենց հերթին քաջառողջություն և նորանոր հաջողություններ ցանկանում Վեհափառ Հայրապետին:

Պաշտոնական ճաշկերույթից հետո, Վահափառ Հայրապետի հրավերով, ներկաները խմբովին նկարվում են Վեհարանի շքամուտքի առջև:

Երեկոյան հայ և քույր Եկեղեցիների պատգամավորները Երևանի օպերայի և բալետի պետական թատրոնում ներկա են լինում Հայաստանի պետական հոգչախմբի համերգին:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՂՈԹՔ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Սեպտեմբերի 26-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Հայ Եկեղեցու պատգամավորները և քույր Եկեղեցիների ներկայացուցիչները ծաղիկներով ու ծաղկեպսակներով այցելում են հայ նահատակաց հուշարձան:

Հոգևորականներից կազմված թափորը դանդաղաքայլ մոտենում է հուշարձանին: Թափորի առջևից երկու վարդապետներ տանում են կարմիր և սպիտակ մեխակներով Քրիստոսի Խաչը խորհրդանշող ծաղկեպսակը: Հավերժական կրակի մոտ տեղի է ունենում հոգեհանգստյան արարողություն 1915 թվականի ցեղասպանության զոհերի հիշատակին:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդում ընդունելությունից հետո, ժամը 14-ին, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը «Հրապդան» հյուրանոցում ճաշկերույթ է տալիս Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի պատվին՝ ծննդյան 75-ամյակի առթիվ:

Ճաշկերույթին ներկա էին Հայ Եկեղեցու արտասահմանյան և ներքին թեմերի առաջնորդները, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Անգլիայից, Իտալիայից, Լիբանանից, Սիրիայից և աշխարհի այլ երկրներից ժամանած հոգևոր ու աշխարհիկ հյուրեր:

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՄՈՏ

Ներկա էին նաև Ռուսաց, Ռումին, Անգլիկան, Բուլղար, Վրաց Եկեղեցիների պատգամավորները:

Ճաշկերույթին ներկա էին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի արտաքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Լևոն Մանասերյանը, Հայկական ՍՍՀ արտաքին գործերի մինիստր Զոն Կիրակոսյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության նախագահության նախագահ Նորա Հակոբյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանյան տուրիզմի վարչության պետ Հենրիկ Լիլոյանը, Հայաստանի խաղաղության ֆոնդի նախագահ, կոմպոզիտոր Էդուարդ Միրզոյանը, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրի առաջին տեղակալ Մարատ Խարազյանը, Հայաստանի Հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Խաչատրյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ Անդրանիկ Հասրաթյանը և Ռ. Զարգարյանը, մշակույթի, գիտության և արվեստի գործիչներ:

Ճաշկերույթի ժամանակ ելույթ է ունենում Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռոբեն Պապազյանը և Հայ Եկեղեցու գործերի խորհրդի անունից ջերմորեն շնորհավորում հոբելյար Հայրապետին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով պարգևատրվելու առթիվ, մաղթելով նրան քաջառողջություն, նոր հաջողություններ իր հայրենանվեր գործունեության մեջ:

Ապա ներկաները ջերմորեն ընդունում են Վեհափառ Հայրապետի խոսքը, որով նա շնորհակալություն է հայտնում Գերագույն սովետի նախագահությանն ու կառավարությանը իրեն Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով՝ Սովետական Հայաստանի բարձրագույն պարգևով պարգևատրելու համար:

Շարունակելով իր խոսքը՝ Վեհափառ Հայրապետը նշում է. «Հայ Եկեղեցին Սովետական Հայաստանում գործում է ազատ ու արգասավոր կերպով: Հանրապետության կառավարությունը մեծ ուշադրություն է նվիրում մեր կարիքների բավարարմանը: Դա մեկ անգամ ևս դրսևորվեց այս օրերին, երբ Սուրբ Էջմիածնում տոնվում է իմ 75-ամյակը:

Իմ կյանքի 75-ամյակին և կաթողիկոսական գահակալության 28-րդ տարեդարձին լրանում է նաև իմ քահանայական ձեռնադրության 40 տարին:

Հինգերորդ անգամ է, որ ես Սուրբ Էջմիածնում կատարում եմ մեռնոլորհնության սուրբ խորհուրդը:

Ես խորապես շնորհակալ եմ Հայ Եկեղեցու արտասահմանյան թեմակալ առաջնորդներից, հոգևոր և աշխարհական հյուրերից, որոնք ներկայացնում են հայ համայնքները և ժամանել են աշխարհի տարբեր երկրներից, որպեսզի մասնակցեն մեռնոլորհնությանը և իմ հոբելյանական հանդիսություններին:

Վերածնված Հայաստանին են սևեռված տարբեր երկրներում ապրող միլիոնավոր հայրենակիցների հայացքները: Սովետական Հայաստանի հաջողությունները ուրախություն են պատճառում նրանց: Ընդլայնվում են մայր հայրենիքի կապերը Սփյուռքի հետ»:

Վերջում Հայոց Հայրապետն ասում է, որ ինքը միշտ հավատարիմ կմնա հայ ժողովրդին, Հայ Առաքելական Եկեղեցուն և աշխարհի հավիտենական խաղաղության համար մղվող պայքարին:

Ճաշկերույթի ընթացքում շնորհավորական բաժակաճառով հանդես է գա-

լիս Կ. Պոլսի հայոց Պատրիարք ասենապետիվ Տ. Շնորհք արքեպ. Գալուստյանը, որը ի սրտե շնորհավորում է Վեհափառ Հայրապետին հոբելյանի առթիվ՝ մաղթելով նրան նոր մեծագործություններ Հայ Եկեղեցու անդաստանում:

Մոսկվայի և համայն Ռուսիոյ Պատրիարք Պիմենի անունից Հայոց Հայրապետին է ողջունում Լենինգրադի միտրոպոլիտ Անտոնին: Իր խոսքում նա նշում է, որ ռուս և հայ ժողովուրդները եղբայրներ են վաղնջական ժամանակներից: Սերտ բարեկամությամբ են կապված նաև Ռուսաց և Հայոց Եկեղեցիները: Նրանք աշխարհի մյուս Եկեղեցիների հետ միասին պայքարում են հանուն այն բանի, որ պատերազմի սև ամպերը երբեք չմռայլեն կապույտ երկինքը, պայքարում են հանուն մարդկության երջանկության և առաջադիմության:

Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու այսուվիրակության ղեկավար միտրոպոլիտ Թեոկթիստը իր խոսքում նշում է. «Այսօր Սովետական Հայաստանը մեծ առաջադիմության է հասել կյանքի բոլոր բնագավառներում: Եվ արդեն երկրորդ անգամ եմ այցելում այս գեղեցիկ հանրապետությունը և կարող եմ հպարտությամբ ասել, որ այստեղ ընկերային և տնտեսական բնագավառներում իրոք վիթխարի վերափոխումներ են կատարվել: Մենք ուրախ ենք նաև, որ Ռումինիայում բնակվող հայերը մեծ ավանդ են ներդնում մեր երկրի բարգավաճման գործում»:

Տ. Սուրեն արքեպ. Գաթարոյանը Ամենայն Հայոց կաթողիկոսին է փոխանցում Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի ողջույնի ուղերձը:

Շնորհավորանքի սրտաբուխ խոսքերով Վեհափառ Հայրապետին է դիմում Վրաց Եկեղեցու Մարգվեթի եպիսկոպոս Տ. Քրիստափորը: Իր խոսքի մեջ նա շեշտում է, որ հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը կոփվել է բռնակալների դեմ նրանց մղած համատեղ պայքարում:

Պրոֆեսոր Բարունակ Թովմասյանը՝ Լիբանանից, Կիրիլ վարդապետը՝ Բուլղարիայից, իրենց խոսքերում նշում են այն մնայուն ավանդը, որ Հայ Եկեղեցին իր Հովվապետ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ ներդնում է ամբողջ աշխարհի խաղաղության համար մղվող պայքարում:

Ճաշկերույթը անցնում է բարեկամական սրտագին մթնոլորտում: